ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄԱՆԻՇ ԴՈՏԻՈՎ ԿԱՐԱՍՆԵՐԻ ԶԱՐԴԱԶԵՎԵՐԸ

Ֆ. Ս. ԲԱԲԱՅԱՆ

Հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութերի մեջ բնորոշ խումբ են կազմում XI—XIII դդ. պատկանող միջնադարյան Հայաստանի դրոշմազարդ կարասները, որոնք իրենց ինքնատիպ զարդերով ու սիմվոլիկ պատկերներով բաղմիցս արժանացել են մի շարք գիտնականների ուշադրության[1]։

Այս դրոշմագարդ կարասները միատեսակ չեն, նրանք օգտագործվել են տարբեր նպատակների համար և այդ պատճառով արտաքին ձևերով տարբերվում են միմյանցից։ Սրանց մի տեսակը երկարավուն է, առանց ունկի, փոքր նստուկով և նեղ բերանով. մեծ մասամբ պահվել է մառաններում և կիսով չափ թաղվել գետնի մեջ, որի պատճառով էլ նրանց ստորին մասը ներկված չէ[2]։

Մյուս տեսակը՝ ուռուցիկ իրանով է, ունի երկուսից-չորս կանթ, բերանի լայն բացվածք, ներկված է մուգ և հաճելի կարմիր գույնով, որը, ինչպես Կ. Ղաֆադարյանն է գտնում, օգտագործվել է որպես սեղանի սպասք[3]։

Կարասների այս երկու ձևերն էլ իրենց վրա ունեն հետաքրքիր զարդեր, որոնք կատարվել են միջնադարյան հայ վարպետների կողմից տարբեր եղանակներով։ Կավամանները զարդարելու համար պատրաստվել են հատուկ գլանաձև կլոր կնիքներ և չափավոր ճնշումով պատեցրել կարասի իրանի վրայով, ստանալով քանդակադրոշմ պատկերներ՝ 2—5 սմ լայնությամբ։ Զարդագոտիները ձգվում են կարասների փորի շուրջը, բայց պատկերները կրկնվում են յուրաքանչյուր 10—20 սմ-ից հետո[4]։

Պատկերների յուրաքանչյուր հատված մյուսից բաժանված է սանդղաձև զարդով, կամ ոճավորված կենաց ծառերով. սա պատկերներին տալիս է ավելի ամբողջական տեսք։ Օրան-Կալայի և Գանձակի կարասների վրայի պատկերներն այս սահմանազատումը չունեն. թռչուններն ու կենդանիները հաջորդում են իրար, շրջապատված կետերով և զարդագծերով։ Գ. Մ. Ահմեդովը դա համարում է ազգային արվեստի առանձնահատկություն[5], անտեսելով սակայն, որ Հայաստանում այդպիսի ամանները շատ ավելի մեծ թիվ են կազմում և նրանց տարածումը դուրս չի գալիս հայաբնակ վայրերից։ Դրոշմագարդ կա-

1 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1958 Г. О. Караханян, Неполивная орнаментированная керамика из раскопок Двина и Ани, 1954 (автореферат канд. дисс.). Г. Чубинов, Декоративное убранство Анийских карасов, Петроград, 1916. Б. А. Шелковников, Художественная керамическая промышленность средневековой Армении. Известия, 1949, Ереван

2 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 188.

3 Նույն տեղում։

4 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 224։

5 Г. М. Ахмедов, Неполивная керамика Орен-Кала IX—XII вв., МИА, 67, стр. 202.

բասների վրայի զարդերը առաջին հայացքից թվում են պարզ ու հասարակ։ Սակայն մանրադնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս պատկերները զարդաձևեր լինելուց բացի, ունեն նաև որոշակի բովանդակություն, որտեղ արտացոլված է հայ ժողովրդի կենցաղն ու հողևոր մշակույթը։

Այդպիսի բովանդակություն ունեն նաև մեր տրամադրության տակ գտնըվող Անիի դրոշմազարդ կարասների բազմաթիվ բեկորներ[6], որոնցից մի քանիսը այստեղ քննության ենք առնում։

Ուշադրության արժանի է Անիից պեղված կարասի մի կտորը[7], որի վրա դրոշմված է ոճավորված ծառ՝ պտուղներով բեռնված. սրա երկու կողմերում կանգնած են երկու եղջերուներ, որոնց միայն գլուխներն են նշմարվում (տե՛ս նկ. 1)։ Կենաց ծառի մոտիվը տեսնում ենք նաև Անիի մեկ այլ կարասի բեկորի վրա[8]։ Այստեղ պատկերված են կենդանիներ, եղնիկ, որին հետապնդում է բերանը լայն բացած, ոճավորված պոչով գայլը, վերջինիս հետևից վազում է եղջերուն, ասես, ձգտելով վրկել իր ձագուկին (տե՛ս նկ. 2)։

Համանման մի ուրիշ մոտիվի ենք հանդիպում նաև Դվինի զրոշմազարդ կարասի վրա, որտեղ պտուղներով լեցուն ծառի երկու կողմում այծեր են դրոշմված։ Այս և նման բազմաթիվ ամանների վրա պատկերված ծառերը ոչ այլ ինչ են, եթե ոչ աճման և պտղաբերության խորհրդանշաններ, որոնցով այնքան հարուստ է մեր զարդարվեստը։

Անասնապահությամբ և երկրագործությամբ զբաղվող ժողովուրդներին, այդ թվում նաև հայ ժողովրդին չէին կարող չհետաքրքրել բնության մեջ տեղի ունեցող երևույթները[9]։ Նրանք իրենց գոյությունը ապահովող գլխավոր աղբյուրներից մեկը համարում էին բուսական և կենդանական աշխարհը, որն իր արտացոլումն է գտել հայկական ճարտարապետական կոթողների զարդաքանդակներում[10]։ Գիտելիքների համեմատաբար պակասը նրանց հանգեցրել է սխալ եզրակացությունների, այդ պատճառով բուսական աշխարհում տեղի ունեցող բոլոր երևույթներին հին ցեղերն ու ժողովուրդները, դրանց թվում նաև հայերը, վերագրել են գերբնական ուժ, կապել նրանց զանազան աստվածությունների հետ, գարձրել պաշտամունքի առարկա։ Այս սովորույթը չվերացավ նաև քրիստոնեությունից հետո։ Հայաստանի շատ բնակավայրերում մինչև վերջին ժամանակներս կային ծառեր, որոնց ժողովուրդը պաշտել է, նրանցով երդվել[11]։ Այդ սուրբ ծառերը չորանալուց հետո անգամ չէին կտրում, փտած բների փոշին օգտագործում էին իբրև բուժական միջոց։

Միջնադարյան գրիչների կողմից հիշատակվում է փենուա կոչված ծառը. որի մասին ավանդել են.

«Յորժամ ծխես, դեն փախչի, թե զարմատն տերևովն ծխես, ոչ դև, ոչ չար, պմերձենա ի քեզ և ոչ ի տուն քո»[12]։

Հայտնի է, որ Վանի Ականց գյուղի ս. Գևորգ վանքի հացենու ծառերի առջև խունկ են ծխել, մոմ վառել և դրանց տերևների ջրով լվացվել են[13]։

6 Այդ նյութերը պահվում են ՊՊԹ ֆոնդերում, կոլ. 123։
7 ՊՊԹ 123/62։
8 ՊՊԹ 123/61։
9 Աս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական զարդարվեստ, Երևան, 1954 (գլուխ 1-ին)։
10 Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն, Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դդ., Երևան, 1949
11 Խ. Ս ա մ ո ե լ յ ա ն, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1934, էջ 211։
12 Ա լ ի շ ա ն, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք Հայոց, էջ 74։
13 «Ազդարարական հանդես», հ. 25, էջ 40։

Շատ երկրներում, ինչպես և Հայաստանում հարսանեկան հանդեսների ժամանակ սկեսուրը բարձր տեղից «ընկույզ կամ կալին» էր շաղ տալիս հարսի գլխին, ապահովելով նորաստեղծ ընտանիքի կյանքի պտղաբերությունն ու առատությունը։

Իսկ Համբարձման տոնի արարողությունը հենց գարնան, բուսական աշխարհի ծաղկման, պտղաբերության վառ արտահայտությունն է, երբ բաղմաբարյան սովորույթների համաձայն երիտասարդ աղջիկները դիմում էին ծաղիկներին, ցանկանալով գուշակել իրենց ապագան[14]։

Այս օրինակներից պարզվում է, որ հնագիտական իրերի, տվյալ դեպքում կարասների վրա, այնքան շատ հանդիպող ծառերը լոկ դեկորատիվ դարդեր չեն, այլ կենաց ծառեր՝ սերտ կապված մեր նախնիների ըմբռնումների և սովորույթների հետ։ Այս ամենից հետո ճիշտ չի լինի, եթե համաձայնվենք Բ. Ա. Լատինինի և Գ. Մ. Ահմեդովի հետ, որոնք Գանձակի, Օրան-Կալայի այնքան շատ և բաղմաբովանդակ կարասների վրայի պատկերները ուսումնասիրելուց գրում են. «Մենք չգիտենք, թե ի՞նչ էին մտածում ադրբեջանցի կավագործները XII—XIII դդ., երբ կարասների վրա ծառեր էին պատկերում։ Պտղաբերության և անմահության դաղափարը արտահայտող կենաց ծառից այստեղ շատ քիչ բան է մնացել։ Չնայած այդ պատկերները ոճավորված են, սակայն նրանք լոկ որպես բնության մասնիկ են հանդես գալիս և չունեն ոչ մի դաղափարական բովանդակություն»[15]։

Կարասների վրայի կենաց ծառերը հանդիպում են մի քանի ձևերով՝ պտուղներով, առանց պտուղների, եղևնաձև[16] և, վերջապես, ռոմբաձև։

Ռոմբաձև կենաց ծառերի բովանդակությանը անդրադարձել է Աս. Մնացականյանը և բաղմաթիվ օրինակների թվում վկայակոչել նաև Անիի կարասները[17]։

Ռոմբաձև կենաց ծառ է դրոշմված մի բեկորի վրա, որտեղ պատկերված են այծեր և երկու մարդ[18] (տե՛ս նկ. 3)։ Մի այլ բեկորի վրա[19], թռչունի՝ հավանաբար սիրամարգի, այծի, ձեռքերը վեր պարզած մարդու կողքին նույնպիսի մի ծառ ենք տեսնում։ Իսկ մեկ ուրիշ դրոշմազարդ կարասի բեկորի վրա պատկերված են բադ, երկու մարդ ռոմբաձև ծառի աջ և ձախ կողմերում, նրանց կողքին՝ շուն[20] (տե՛ս նկ. 4)։

Պետք է ենթադրել, որ այս ռոմբաձև զարդը պարզապես խիստ ոճավորված կենաց ծառ է, որը մարդկանց և կենդանիների հետ միասին հանդես գալով, պտղաբերություն է իմաստավորում։ Կենաց ծառը իր բաղմաթիվ ձևերով հանդիպում է ուրարտական կնիքների, սաղավարտների, ասորական, հունական և այլ երկրների նյութական կուլտուրայի հուշարձանների վրա, միջնադարյան հայկական մանրանկարչության մեջ։

Կարասների վրայի այս կենաց ծառերը, ինչպես տեսնում ենք, ինքնու-

---

14 Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 10։

15 Б. А. Латынин, Изв. ГАИМК, вып. 69, стр. 8. Г. М. Ахмедов, МИА, 67, стр. 204.

16 Г. О. Караханян, ук. работа (автореферат), стр. 18.

17 Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 169։

18 ՊՊԹ 123/186։

19 ՊՊԹ 123/110։

20 ՊՊԹ 123/97։

լույն հանդես չեն գալիս։ Կենդանիներն ու թռչունները, ինչպես և մարդիկ ուղեկցում են սրանց, ակնհայտ դարձնելով պատկերի դաղափարական բովանդակությունը։

Այսպես, Անիի մի կարասի վրա պատկերված են երեք մարդ, ձեռքերը վեր բարձրացրած, սրանց կողքին կենդանի և սկավառակ։ Համանման մոտիվ ենք տեսնում Դվինի միջնաբերդում գտնված կարասի վրա[21], որտեղ դրոշմված է կենաց ծառ, ձախ կողմում եղնիկ և ինչ-որ թռչուն, աջ կողմում՝ իրար ձեռք բռնած երեք մարդ։

Կ. Ղաֆադարյանի կարծիքով այս պատկերները որսի, պարի, խրախճանքի տեսարաններ են, որոնք այնքան սիրված են եղել միջին դարերում[22]։ Հավանաբար, սրանք իրոք ուրախության տեսարաններ են։ Սակայն կենաց ծառերի ու կենդանիների առկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այստեղ գործ ունենք ժողովրդական որևէ տոնի, ծիսական որևէ արարողության հետ[23], որը պետք է, որ կապված լինի պտղաբերության պաշտամունքի հետ։ Անիի № 96 կարասի բեկորի վրա պատկերված եկեղեցին, մարդը, կենաց ծառի կողքին կանգնած թռչունները պետք է որ եկեղեցական արարողություն պատկերող զարդամոտիվներ լինեն (տե՛ս նկ. 5)։

Կարասների վրայի ամենատարածված թռչունը սիրամարգն է[24], որ կարելի է տեսնել նաև հայկական ճարտարապետական հուշարձանների ու քարե կոթողների վրա։ Դրանք պատկերված են դեմ-դիմաց, կենաց ծառի երկու կողմում (Անի, 123/69)։ Գարեգին Հովսեփյանը գտնում է, որ սիրամարգը բացի դեկորատիվ զարդ լինելուց, հանդես է գալիս նաև որպես հոգու անմահության խորհրդանիշ։ Կարասների վրա շատ են հանդիպում նաև աղավնու պատկերներ[25] (տե՛ս նկ. 6)։ Կենաց ծառի երկու կողմում կանգնած աղավնիները պտղաբերության տիպիկ օրինակներ են։

Ագգադրական նյութերից պարզվում է, որ աղավնին օրհնված թռչուն է, երբ Նոյը տապանից նրան բաց թողեց գարնան լուր բերելու, ագռավը հարձակվեց և կծեց նրա լեզուն։ Աղավնին, սակայն, Նոյին լուր տանելու հնարքը գտավ։ Նա կտրեց կանաչած ծառի ճյուղը և տեղ հասցրեց, որից Նոյը հասկացավ, որ ջուրը ցամաքել է։ Այդ օրվանից ագռավը անիծված թռչուն է համարվում, իսկ աղավնին՝ բարի[26]։ Քրիստոնեական կրոնի մեջ աղավնին համարվում է «սուրբ հոգի»։

Կարասների վրա հանդիպում են շների պատկերներ։ Նախնադարյան մարդը դեպի շունը տածել է խորհրդավոր ակնածանք[27] (տե՛ս նկ. 7)։

Հայկական մտածողությամբ, շունը ամենասերտ կերպով կապված է եղել իր տան տիրոջ հետ և ոռնացել է, տեսնելով մահվան հրեշտակի մոտենալը տիրոջ տանը։

---

21 ՊՊԹ 1794/275։

22 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 188։

23 Ռ. Ա ռ ա ք ե լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 225։

24 Г. О. К а р а х а н я н. Неполивная орнаментированная керамика из раскопок Двина и Ани, 1954, стр. 22.

25 Г. Ч у б и н о в, ук. соч., табл. XVII, рис. 2.

26 «Աղգագրական հանդես», հ. 25, էջ 47, № 2։

27 ՊՊԹ 123/9, 123/57, 94, 68 այս բեկորների վրա շունը պատկերված է տարբեր դիրքերով. վազքի մեջ, աքաղաղի, կենաց ծառի, այծերի, մարդկանց ուղեկցությամբ։

Տեսոն ընդ առաջ եկեղեցական տոնի օրը մարդիկ կրակ վառելիս հրաղեն են արձակել, որի ձայնից շները փախել են այս ու այն կողմ։ Փախուստի ուղղությունը համարվել է այդ տարվա համար առատություն բերող կողմ[28]։

Լինելով մարդուն հավատարիմ կենդանի, հասկանալի կերպով, շունը դասվել է տոտեմների շարքը։ Այդ կենդանին իր մեջ պարունակել է նախահոր կերպարանափոխված հոգին[29]։

Հին հայերը հավատում էին, որ արալեզները առաջացել են շներից։ Ըստ Եղնիկ Կողբացու, դրանք այն աստվածներն են, որոնք սերվել էին շներից և անհերևույթ զորությամբ լիզում և հարություն էին տալիս կռվում ընկած հերոսներին[30]։

Կարասների վրա հանդիպում են նաև դայլի պատկերներ[31]։ Ըստ հավատալիքների՝ դայլը բնության և հասարակության չար ուժերի մարմնացման արտահայտություններից մեկն է։ Հայերի մոտ, բարիկենդանի չորեքշաբթի օրը, որը «գելի տոն» է կոչվում, կանայք հանդիստ են առնում, որպեսզի իրենց տներն ու ճամփաները դայլի վտանգից զերծ մնան[32]։ Շատ տանտիկիններ գայլի վեգը կախում էին իրենց զոտիներից, որպեսզի տան յուղին, թան ու թացանին չար աչք չդիպչի։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Անիում գտնված կարասի այն բեկորը[33], որի վրա դրոշմված է հեծյալ, կողքին հավանաբար արևը նշանավորող, մի շրջանակ, հետո մարդ, որը բարձրացրած ձեռքում ինչ-որ գործիք ունի։ Նրա կողքին ոճավորված թռչուն՝ սիրամարգ, պտուղներով ծանրաբեռնված թաս և կենաց ծառ։ Սա նման է որսորդական տեսարանի, որն այնքան տարածված է եղել ավատական դասի կենցաղում։

Որսորդությունը միջնադարում հարգված և սիրված զբաղմունք էր, այն դիտվում էր որպես քաջության և հերոսության ցուցադրություն։ Հայտնի է, որ Արշակունիների, Բագրատունիների խաղաղ ժամանակվա ամենասիրելի զբաղմունքը որսորդությունն էր, որը երգվել է պոեզիայում, արտացոլվել միջնադարյան նկարիչների ստեղծագործություններում և դարձել է արևելքում արտադրվող բազմապիսի պատկերազարդ կավամանների հիմնական թեմաներից մեկը[34]։ Պարզ է, որ որսորդության մեջ այնքան մեծ դեր խաղացած ձին էլ պետք է իր արտացոլումը գտներ կիրառական արվեստում, ինչպես նաև ժողովրդական հեքիաթներում, երգերում, որտեղ քաջ ու համարձակ հերոսները ծովից դուրս եկած հրեղեն ձիերով հաղթում են չար ուժերին։ (Հրեղեն ձիու տիպիկ օրինակ է Սասնա Մհերի Քուռկիկ Ջալալին, որը մեկ թռիչքով արևին կարող էր հասնել)։

Անիի կարասի այս պատկերն էլ կարծես նույն միտքն է արտահայտում։ Խրոխտ ձին, համարձակորեն ձեռքերը վեր բարձրացրած մարդիկ, կարծես, հաղթական մարտի մունետիկներ լինեն, իսկ նրանց կողքին դրոշմված կենաց

28 «Ազգագրական հանդես», 7—8-րդ, էջ 122։
29 Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, էջ 190։
30 Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, էջ 28։
31 ՊՊԹ 123/61, 123/146, 158։
32 Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 208։
33 ՊՊԹ 123/69։
34 Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դդ., էջ 66։

ծառը սիրամարգի հետ միասին նկարին տալիս է գարնան, պտղաբերության հարատևման գաղափար արտահայտող բովանդակություն։

Համանման պատկեր ունի Արմավիրից պեղված կարասի բեկորը, այն տարբերությամբ միայն, որ վերջինիս վրա պատկերված են վերադիր կերպով առյուծի թաթեր։ Զիու պատկերով կարասի բեկորներ գտնվել են նաև Դվինում[35], Գառնիում, Օրան-Կալայում, Գանձակում և միջնադարյան այլ քաղաքներում։

Բացի ձիերից, կարասների վրայի պատկերներում շատ են հանդիպում եղնիկներ, եղջերուներ, վայրի այծեր, ոչխարներ, որոնք հեռավոր ժամանակներից ծանոթ են եղել տեղական ժողովուրդներին և սերտ կապվել նրանց կրոնական պատկերացումների հետ։

Այսպես, Անիից գտնված մի կարասի բեկորի վրա[36] պատկերված են եղնիկներ՝ վազքի ժամանակ, նրանց կողքին մարդ, ձեռքերը վեր պարգած։ Մեկ ուրիշ կարասի վրա, կենաց ծառերի միջև դրոշմված են եղջերուներ վազքի ընթացքում։ Նույնատիպ պատկերով կարասներ հայտնի են Գառնիից, Դվինից, Գանձակից և այլ վայրերից։ Եղնիկների պատկերներ են կրել նաև հայկական մանրանկարչության լավագույն նմուշները։ Հայկական ժողովրդական հին ծեսերում եղջերուները երևան են գալիս որպես տոտեմի մնացուկներ։

Տոտեմի մնացորդ են համարվում նաև կարասների վրա այնքան հանդիպող այծերի պատկերները, կենաց ծառերի ուղեկցությամբ։ Անիից պեղված գոտեզարդ մի կարասի բեկորի վրա[37] (տե՛ս նկ. 8), զիգզագաձև սյուների միջև դրոշմված է այծ, որը կերակրում է իր ձագին, նրանց հետևում կանգնած է սիրամարգ, կտուցը հենած այծի պոչին։ Համանման տեսարան ունի նաև Անիի կարասի բեկորը[38], որտեղ ոճավորված այծերն իրենց ուլիկների հետ, անկասկած, պտղաբերության իմաստ են արտահայտում։ Նույնատիպ պատկերներ ունեն Դվինից և Գառնիից պեղված կարասները[39]։ Բավական ինքնատիպ է Անիի կարասի այն բեկորը, որի վրա պատկերված են այծեր, ուլեր, ոճավորված մարդ, որն, ասես, ձեռքին պահած ունի նետ ու աղեղ. վերջինիս կողքին դրոշմված է (կետերի մեջ առնված) երկթև ծայրեր ունեցող խաչ[40] (տե՛ս նկ. 9)։ Պետք է ենթադրել, որ այստեղ խաչը, որպես կենաց ծառ, կամ արևը նշանավորող սիմվոլ է հանդես գալիս, որն, անկասկած, հանգեցնում է կյանքի հարատևության գաղափարին։ Նման պատկերով մի կարասի բեկոր կա Օրան-Կալայից պեղված նյութերի մեջ[41], որտեղ կետերի մեջ առնված խաչի երկու կողմում կանգնած են խիստ ոճավորված այծեր. սրանց մեջքին նստած են վերջիններիս ձագերը։ Գ. Ա. Ախմեդովը այն համարելով քրիստոնեական սիմվոլ, գտնում է, որ դա լոկ պատահականություն է և մահմեդական միջավայրին խորթ երևույթ։ Այո, խաչը մահմեդական միջավայրին խորթ երևույթ է, սակայն ոչ պատահական Օրան-Կալայի համար։

35 Հետաքրքրական է Դվինի 1417/297 կարասի բեկորը, որտեղ թերևս աստղերի մեջ աղավնիների հետ պատկերված են այծեր, ձիեր, դինամիկ թռիչքի ընթացքում։ Սա երկնային մի դեղեցիկ տեսարան է։

36 ՊՊԹ 123/60։

37 ՊՊԹ 123/126։

38 Г. Чубинов, Декоративное убр. анийских карасов, табл. XXI, նկ. 1, 2.

39 Б. Н. Аракелян, Гарни, I, Ереван, 1958, 74, 64.

40 Г. Чубинов. Декоративное убранство анийских карасов, табл. XVII, рис. 3.

41 Г. М. Ахмедов, указ. соч., 199, табл VI.

2
3
1
4
6
5
7
8
9
0 1 2 3 4 5

Օրան-Կալայում պեղված զրոշմազարդ կարասները, նույնիսկ իրենց վրա ունեցած պատկերների առանձնահատկություններով, չեն կարող անջատվել Հայաստանի միջնադարյան քաղաքներից պեղված նույնանման նյութերից, քանի որ այս պատկերներն իրենց տարատեսակներով և բովանդակությամբ արդասիք են մեկ ընդհանուր մշակույթի։ Բացի այդ, ինչպես պարզված է, խաչը որպես զարդաձև շատ ավելի վաղ է երևան եկել (նախքան քրիստոնեությունը) և ինքնուրույն կերպով տարածվել է շատ ժողովուրդների մոտ[42]։

Դիմենք հայկական սկզբնաղբյուրներին՝

«Քանզի ի ձև խաչի, բաղում կերպարանք են յօրինեալք երկինս և ի վերա երկրի, նաև յանբան կենդանիս...»[43]։

Հին ժողովրդական ըմբռնումների հետ են կապված այծերը, որոնք, ինչպես հայտնի է, տնտեսական կյանքում այնքան էլ մեծ դեր չեն կատարել։ Պետք է ենթադրել, որ այս կենդանիները հնադույն ժամանակներից կապված լինելով որոտի, կայծակի, փոթորկի, ամպի պաշտամունքի հետ, պտղաբերության և առատության դաղափար են իմաստավորել։ Հավանաբար այդպիսի գաղափար է արտահայտում մեր նյութերի մեջ եղած կարասի բեկորի վրա վերարտադրված պատկերը[44], ուր երկնային լուսատուների, աստղերի, արեը խորհրդանշող երկու շրջանակների կողքին պատկերված է ցատկող այծ։ Ըստ Բ. Առաքելյանի, «Վիշապաքաղը հարաբարդված է վիշապ և քաղ բառերից, որը և նշանակում է վիշապալայծ։ Վերջինս Վահագն աստծու կերպարն է, առաջացած նրա պաշտամունքի ավելի վաղ փուլում, երբ ամպրոպի, փոթորկի և ամպի աստվածությունը մի էր և հանդես էր դալիս արու այծի և թևավոր վիշապի մասին պատկերով[45]։

Անիի կարասների վրա հաճախ են հանդիպում աքաղաղի, հավի, բադի պատկերներ[46]։ Հայ ժողովրդական հավատալիքներում պահպանվել են հավերի ու աքաղաղների հետ կապված շատ ավանդություններ։ Այսպես, Փութկա ս. Գևորգ վանքում պահվել է մի աքաղաղ, որն իբր կուսակրոնի կյանք է վարել։ Նա աղատորեն օգտվել է վանքի բարիքներից և սատկելիս էլ «պատանքով» է թաղվել։ Այս աքաղաղը իբր գուշակող է եղել. «Երբ նա խոսի, ուղևորները կվստահեն ճամփա ելնելու, երբ օղը վտանգավոր թվի, քանի մը օր բոլորովին անխոս կմնա»[47]։

Հայտնի է նաև, որ աքաղաղը որպես պտղաբերության ուժ է հանդես եկել։ Եվ կարասների վրա տարբեր կենդանիների, թռչունների, ծառերի հետ հանդես գալը նրան դուրս է բերում կենդանական աշխարհից և տալիս սիմվոլիկ մեկնաբանություն։

Անիում է գտնվել նաև մի կարաս, որի վրա ռելեֆ կերպով զրոշմված է հեծյալ, հետևից հետիոտն, որի բարձրացրած ձեռքում ինչ-որ գործիք կա։ Հեծյալի ու հետիոտնի միջև շրջանակ է երևում. նույն կարասի վրա զրոշմված է երեք զույգ առյուծ՝ կանգնած դեմ առ դեմ[48]։ Պետք է ենթադրել, որ առյուծն

42 Происхождение креста, Сборник статей, Москва, 1927, стр. 3.

43 Ն. Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 375։

44 Г. Чубинов, указ. соч., табл. XXII, рис. 7.

45 Բ. Առաքելյան, Դիտողություններ Վիշապաքաղ Վահագնի մասին, «Տեղեկագիր», 1961, № 2։

46 ՊՊԹ 123/4, 13, 92, 49 և այլն։

47 Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, Պոլիս, 1874, էջ 106։

48 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., էջ 225։

այստեղ ներկայացված է որպես ուժի և իշխանության սիմվոլ[49]։ Առյուծի պատկերով ամաններ շատ են հանդիպում Մերձավոր արևելքում[50]։

Շատ են և բազմազան Անիից, ինչպես նաև միջնադարյան այլ քաղաքներից հայտնաբերված զրոշմադարզ կարասների պատկերները, որոնք զալով վաղնջական անցյալից, շարունակում են մնալ որպես թարմ արվեստ, կապվելով մեր ժողովրդի հոգևոր կյանքին ու մտածողությանը։

Այսպիսով, եղած փաստերն ու օրինակները մեկ անգամ ևս վկայում են, որ կավամանների վրայի յուրօրինակ արվեստը բուն ազգային բնույթ ունի[51] և չի կարող, ինչպես թյուրիմացաբար Գ. Ն. Զուբինաշվիլին է գտնում, վոխառություն լինել։

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթը նրա ներքին զարգացման արտահայտությունն է, և դաղստանյան պղնձե կաթսաների վրայի զարդանկարները չէին, որ պետք է ազդեին մի ժողովրդի վրա, որն արդեն ուներ հազարամյակների խորքից եկող ավանդություններ և մշակույթ։

ТИПЫ АРМЯНСКИХ ШТАМПОВАННЫХ КАРАСОВ

Ф. С. БАБАЯН

Резюме

В результате археологических раскопок обнаружен ряд материалов, относящихся к средневековой Армении XI—XIII вв. Среди них значительную группу составляют карасы, которые своими орнаментами и сюжетными изображениями привлекали внимание многих исследователей.

Детальное изучение карасов показало, что изображения, имеющиеся на них, помимо декоративного назначения, имеют определенное идейное содержание, отражающее ряд явлений духовной и материальной культуры армян. В статье анализируется ряд карасов со штампованными изображениями (из Двина, Ани и других мест). Все они связаны с культом плодородия, анимистическими и тотемическими верованиями, почитанием сил стихий и пр. Анализ штампованных изображений средних веков показывает, что они продолжают тысячелетнюю армянскую народную традицию орнаментации предметов быта и искусства.

---

49 В. Н. Левиатов, Керамика старой Гянджи, стр. 8.

50 А. А. Рамашкевич, Изваяния и изображения львов в Иране, М.—Л., 1939, стр. 215.

51 1910 թ. պեղումների ժամանակ Անիում գտնված գլանաձև կնիքը և կարասների այն բեկորները, որոնք իրենց վրա ունեն դրոշմելու եղանակով արված հայերեն արձանագրությունները (№ № 21, 31) մեկ անգամ ևս հաստատում են այդ փաստը։